

ԱՊԱԳԻՆՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻ 2399 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 28 ՕԳՈՍՏՈՍ 2023
• VOL. XLIII, NO 2399 • 28 AOÛT 2023 • MONDAY, 28 AUGUST 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ՓԱՇԻՆԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ, ՈՐ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԿԸ ԾՐԱԳՐԵ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՕՐԵՆ ԲԱՆԱԼ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԸ՝ ԹՈՅԼԱՏՐԵԼՈՎ ՄԻԱՅՆ ԵԼՔԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԵՆ



Հայաստանի կառավարության նիստի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ տեղեկություններ ըստացած է, որ ծրագրեր կը մշակուին Լաչինի միջանցքը միակողմանիորեն բանալու, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղէն միայն ելք թոյլ տալու ուղղութեամբ:

«Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ վարչապետը նշեց, որ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակելը Ատրախանի կողմէ կը շարունակուի, եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան, մասնաւոր հատուածի, Ֆրանսիայի կողմէ Լեռնային Ղարաբաղի համար նախատեսուած մօտ 400 թօն մարդասիրական բեռը կը շարունակէ սպասել Լաչինի միջանցքի մուտքի մօտ:

«Միեւնոյն ժամանակ, մարդասիրական իրավիճակը Լեռնային Ղարաբաղի մէջ կը շարունակէ մնալ լարուած: Իրադրութեան միակ փոփոխութիւնն այն է, որ Կարմիր խաչի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրախումբի միջոցով բուժման կարիք ունեցող եւ այլ քաղաքացիներու որոշակի շարժ սկսած է Լաչինի միջանցքով: Միեւնոյն ժամանակ, մեզ հասաստի տեղեկություններ հասած են, թէ ծրագրեր կը մշակուին Լաչինի միջանցքը միակողմանիորեն բանալու, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղէն ելք թոյլ տալու մուտք թոյլ չտալու ուղղութեամբ», - ըսաւ Փաշինեան:

Ան յիշեցուց, որ այս պահուն նաեւ Հայաստանի Հանրապետութեան մէջ կը գտնուին Լեռնային Ղարաբաղի բազմաթիւ բնակիչներ, որոնք չեն կարողանար վերադառնալ Լեռնային Ղարաբաղ: Անոնցմէ շուրջ 5 հազարը՝ նախորդ տարուայ Դեկտեմբերէն ի վեր Լաչինի միջանցքի ապօրինի փակ ըլլալու հետեւանքով, շուրջ 30 հազարը՝ 2020 թուականի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան 7-րդ կէտի չկիրառելու հետեւանքով:

ՐԱՖՖՅԻ ԷԼԻՕԹԻ՝ ԹԵՔԵԱՆԻ ՄԷՋ ՀԵՏԱԲԵՐՔՐԱԿԱՆ ԽՕՍԱԶՐՈՅՑԸ

Անցեալ շինգշաբթի օր Օգոստոս 17-ին, Թեքեանի «Յարութիւն եւ Սիմա Արզումանեան» Սրահը լեցուած էր խումբ բազմութեամբ մը որ եկած էր լսելու Ելոյթը նախկին Մոնթրէալի մեր գաղութին ծանօթ երիտասարդ քաղաքական լրագրող Րաֆֆի Էլիօթին՝ որ այցելութեամբ կը գըտնըուէր Մոնթրէալի մէջ:

Րաֆֆի Էլիօթի պարագան իսկապէս բացառիկ է: Ան Մոնթրէալի ծնողներով իր ուսումը եւս աւարտելէ ետք այստեղ որոշած է հաստատուիլ Երեւան: Ան ամուսնացած է այնտեղ, տեղացի իր շնորհալի տիկնոջ հետ, եւ հայրն է երկու զաւակներու: Րաֆֆին Հայաստանի մէջ յաջող կերպով հաստատած է իր սեփական գործը եւ մինչեւ այսօր ձեռնբերեցութեամբ, գոհունակութեամբ եւ յայտնի յաջողութեամբ Երեւանը դարձուցած է իր մնայուն բնակավայրը: Նոյն ժամանակ Րաֆֆի Էլիօթ ծանօթ է իբրեւ քաղաքական եւ ընկերային նիւթերու մասին փնտռուած լրագրող մը: Իր յօդուածները յաճախ կը կարդանք մեր «ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթին «The Armenian Mirror Spectator» թերթին եւ այլ անգլիատառ թերթերուն մէջ:



Որոշ է թէ մանաւանդ այս օրերու Հայաստանի եւ Արցախի տագնապալից վիճակին բերմամբ, հոծ թիւով ներկաներ մեծ հետաքրքրութեամբ եկած էին լսելու վկայությունները եւ մեկնաբանությունները կացութեան անմիջականօրէն ծանօթ երիտասարդ լրագրողին:

Խօսազրոյցը կը վարէր Թեքեանի ղեկավարներէն եւ նոյն ինքը գործնապէս Հայաստանի մէջ ծրագիրներ յաջողցուցած պրն. Արթօ Մանուկեան:

Րաֆֆի Էլիօթ գրեթէ երեք ժամ տեւող այս երեկոյթին ընթացքին առաջին բաժնին մէջ նախ տուաւ ընդհանուր եւ առարկայական պատկեր մը Հայաստանի մէջ այս օրերուն տիրող մթնոլորտին մասին: Շատ անմիջական եւ հարազատ կերպով ան նկարագրեց առօրեայ կեանքը պարզ ժողովուրդին:

Որոշ կերպով դրական օրինակներով, Րաֆֆին նկարագրեց յատուկ բնագաւառներուն մէջ այս շրջանին այնտեղ ծաղկող առեւտրական գործունեությունները: Երեւանը դարձած է նաեւ զբօսաշրջիկային ժամանցներով եւ համեղ ճաշացուցակներ սպասարկող ճաշարաններով լեցուն հաճելի քաղաք մը:

Բնականաբար հարցը բոլորովին կը տարբերի երբ կ'անդրադառնանք այսօրուան ձգտուած քաղաքական մթնոլորտին, եւ մանաւանդ Արցախին սուր տագնապին ուր սաստկացող այսօրուայ կացութիւնը, 120,000 մեր ազգակիցները բերած է ցեղասպանութեան սեմին:

Առաջին բաժնէն ետք Արթօ Մանուկեան սկսաւ առիթ տալ ներկաներուն որոնց արտայայտությունները շուտով ուղղուեցան դէպի գոյութեանական քաղաքական եւ ընկերային մեծ հարցերը: Մտահոգութեան մեծ խնդիրներէն մէկն է բնականաբար թէ նկատի ունենալով

ԱՊԱԳԻՆՅ

ԳՐԱՎՈՒՄԾ ԹՈՒՎԱԿԱՆ

Շաբաթ՝ 4 Նոյեմբեր 2023-ին
«ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթի 48-րդ տարեդարձի
ամիթով՝
«Արամ Խաչատուրեան»ի 120-ամեակի
տօնակատարություն:

Մանրամասնությունները յաջորդիւ...

ԽԻՍՏ ՄՏԱՀՈԳԻՉ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՆՈՐ ԱԼԻՔ... ՀԱՅԱՍՏԱՆԷՆ



Ամերիկեան վիզայի դիմումներ ու յարակից փաստաթուղթեր պատրաստող երեւանեան գործակալութիւններէն մէկուն տնօրէնը, Նախկին լրագրող, օրերս մտերմաբար ինծի կը յայտնէր, թէ անձնակազմի սակաւութեան եւ դիմումներու առատութեան պատճառով Ամերիկեան դեսպանատան հիւպատոսական բաժինը մինչեւ յառաջիկայ Փետրուար յետաձգած է Նոր դիմումներու ընդունումը սովորական վիզայի համար:

Առանց բարեկամիս վկայութեան ալ կարելի է պարզ աչքով նկատել, թէ Միացեալ Նահանգներ մեկնողներուն եւ մեկնիլ փափաքողներուն թիւը զգալիօրէն շատցած է, ինչ որ կը յուշէ կամ ենթադրել կու տայ արտագաղթի նոր ալիքի մը մասին, ոչ միայն դեպի Մ. Նահանգներ, այլ նաեւ այլեւայլ եւրոպական երկիրներ, բացառութեամբ Ռուսաստանի, որ 90-ական թուականներուն, ինչպէս յայտնի է, գաղթականութեան գլխաւոր թիրախն էր հայաստանցիներուն՝ 800 հազարէն մինչեւ 1 միլիոն ներգաղթելներով: Հիմա Ռուսաստանը, յատկապէս պատերազմական այս օրերուն գրաւիչ տեղ մը չէ հայերուն համար:

Ընդհակառակը, պատմութեան մէջ առաջին անգամ Երեւանն է շատ գրաւիչ դարձեր յատկապէս երիտասարդ ռուսերուն համար, որոնք օգտուելով ամերիկեան ու եւրոպական հակառուսական պատժամիջոցներէ զերծ ըլլալու շայաստանի դիւրութիւններէն, համաճանցային ազատ կապ, դրամատնային աշխոյժ սպասարկութիւններ եւ այլն, հոս՝ Երեւան փոխադրած են իրենց արտասահմանեան գործառոյթները, միաժամանակ երկիւք բարձրացնելով վարձու բնակարաններու, սննդեղէնի, փոխադրամիջոցներու, հաճոյքի վայրերու եւ մանաւանդ խմելարաններու գիները:

Անոնց ներկայութեամբ զգալիօրէն մեծցած են կարգ մը դրամատուներու դրամագլուխները, մտահոգութիւն պատճառելով մասնագէտ ֆինանսիստներու, քանի որ ռուսական ներկայութիւնը, ուշ կամ կանուխ, ժամանակաւոր բնոյթ կը կրէ եւ, հետեւաբար հետագայ default-ի պատճառ կրնայ դառնալ:

Առայժմ մէկ կողմ ձգելով այս վերջին՝ շատ կարեւոր խնդիրն քննութիւնը, մանաւանդ որ անիկա կը պահանջէ մասնագիտական հմտութիւններ, վերադառնանք մեր բուն նիւթին:

Որո՞նք են պատճառները արտագաղթելու ցանկութեան այս նոր մագլցումին:

Պաշտօնական կամ ստուգուած տուեալներու եւ մասնագիտական վերլուծութիւններու բացակայութիւնը մեզի թոյլ չի տար հաւաստի եւ սպառիչ եզրակացութիւններու յանգիլ: Փոխարէնը, անձնական դիտարկումներու, ծանօթներու հետ զանազան զրոյցներու եւ վիճակագրական սուղ տուեալներու համադրումով կարելի է մի քանի պատճառ թուարկել:

ա) Անվստահութիւնը ապագայի նկատմամբ: Այո՛, այո՛, այլեւ շատ քիչեր կը հաւատան վարչապետին նախընտրական կարգախօսին: «Կայ ապագայ», հարց կու տար եւ ինք ալ վստահ կը պատասխանէր իր հարցումին՝ «Կայ ապագայ»: Շատ-շատեր այժմ ծիծաղելի կը գտնեն այդ խօսքը: Յաջորդ հինգ տարիներուն պատահած աղէտները՝ պատերազմ, պարտութիւն, Արցախի մեծ մասի կորուստ, բուն շայաստանի տարածքներու դէմ սողացող ոտնձգութիւններ, աջէն ու ձախէն սպառնալիքներ, բարեկամ համարուած երկիրներէ անտեսում՝ հետեւանք ձախաւեր դիւանագիտութեան, անտեղի կամ անօրինական ձերբակալութիւններ, բանտարկութիւն, ատելութեան խօսք,

ազգային արժէքներու նկատմամբ արհամարհանք, ազգային մէկութեան գաղափարի նկատմամբ քամահրանք, իսկ վերջին 8 ամիսներուն արցախահայութիւնը սովամահութեամբ ոչնչացնելու թուրք-ազերիական ճնշումներուն դէմ պաշտօնական Երեւանի անզօրութիւն, - այս բոլորը մեր երկրին մէջ ստեղծած են անվստահութեան, անպաշտպանութեան մթնոլորտ մը, որ ամբողջական ժխտումն է աւելի լաւ ապագայ մը ունենալու յոյսերուն:

բ) շայաստանը դարձած է ոչ փրոֆեսիոնալ կառավարման model: Մէկ օրինակ կը բաւէ կառավարութեան ապիկարութիւնը նաեւ գետնի վրայ ներկայացնելու համար: Այս օրերուն այգեկութիւնը սկսած է: Շագարաւոր այգեպաններ չեն գիտեր ինչ ընել իրենց մեծ դժուարութեամբ եւ ծախսերով աճեցուցած խաղողը իրացնելու համար: Անոնց հիմնական սպառողները կամ յաճախորդները խմիչք՝ օղի, քննեաք արտադրող բազմաթիւ ընկերութիւններն են, որոնք կը նախընտրեն փոխանակ տեղական խաղողի՝ Պուլկարիայէն կամ այլ երկիրներէ խաղողի spirit ներմուծել, քիչ մը աւելի աժան: Խելացի կառավարութիւն մը օրէնքի ուժով պիտի սահմանափակէր կամ կրկնակի անգամ բարձրացներ ներմուծող այդ ապրանքին գինը եւ ստիպէր գործարաններուն՝ տեղական ապրանքը գնել:

Եւ այս օրինակը կը տարածուի տնտեսական շատ-շատ մարզերու վրայ: շայաստանի տնտեսութիւնը այսօր գերազանցապէս հիմնուած է ներածումներու վրայ, փոխանակ արտադրական միաւորներ ստեղծելու եւ գործազրկութեան նիշը նուազեցնելու:

Ներկայ իշխանութիւնը առիթ չի փախցնէր կրկնելու, թէ պետական պիտոճէն լեցուն է, նոյնիսկ յաճախ օգտագործելով «աննախադէպ» արտայայտութիւնը: Եթէ այդպէս է, ու ես կը հաւատամ որ այդպէս է, հապա ինչո՞ւ անցնող մի քանի տարիներուն արտադրական կամ արդիւնաբերական որեւէ մեծ կամ միջին տարողութեան գործարան չստեղծուեցաւ պետական վարկով կամ օժանդակութեամբ:

Միայն մէկ պաշտօնական տուեալ՝ խօսուն եւ աղէտալի, եթէ նկատի ունենանք այն իրականութիւնը, որ շայաստանի բնակչութեան շուրջ 60 տոկոսը գիւղատնտեսութեամբ եւ անոր յարակից գործերով կը զբաղի. Երեւանի գիւղատնտեսական (Աքրարային) համալսարանը այս տարի 600-ի փոխարէն 40 նոր ուսանող պիտի ունենայ: (Հնու աւելորդ չէմ համարէր յիշեցնելու, որ հնագոյն այդ համալսարանին շէնքը 30-ական թուականներուն կառուցուած է մեր «Պայքար» թերթին հանգանակած գումարներով):

Թերեւս աւելորդ է ըսել, որ պետական պիտոճէին կարեւոր մասը կը ծախսուի «աննախադէպ» ուռճացուած ոստիկանական ուժերու, պետական պաշտօնեաներու, դատաւորներու եւ դատախազներու 'աննախադէպ' բարձր ամսականներուն, պարզեւավճարներուն, ինքնաշարժներուն, այցելութիւններուն եւ զուարճանքներուն վրայ: Այլ խօսքով՝ գումարները կը ծախսուին միայն այն կառոյցներուն, շրջանակներուն եւ անհատներուն վրայ, որոնք կ'ապահովեն իշխանութեան յարատեւումը:

Ինչպէս կը տեսնուի, երիտասարդ սերունդի ապագայի անհեռանկարութիւնն է, որ պատճառ կը դառնայ արտագաղթելու տրամադրութեան ձեւաւորումին, մանաւանդ այն երիտասարդութեան, որ տակաւին ամուսնացած չէ, ընտանիք չէ կազմած, չունի կաշկանդող որեւէ պատասխանատուութիւն եւ պատրաստ է, ինչպէս ժամանակին, բայտս որոնելու արկածախնդրութեան ընդառաջ երթալ:

գ) Այս իմաստով ամենամտահոգիչը, դարձեալ երիտասարդ սերունդին ամնչուող, բանակային տարիքի հասած կամ հասնող տղոց խնդիրն է:

Շայաստանէն արտագաղթող կամ արտագաղթելու տրամադրութիւն ունեցող ընտանիքներու մեծ մասը, անձնական դիտարկումով, 12-16 տարեկան տղայ զաւակ ունեցողներուն կը վերաբերի: Յատկապէս 44-օրեայ պատերազմէն ետք, ուր ամբողջ սերունդի մը, շուրջ 5000 հոգի, զոհուիլը տեսանք: Անոնց մայրերու եւ միւս հարազատներու խոշտանգին ու նուաստացումին, ինչպէս նաեւ շուրջ 10 հազար հաշմանդամ դարձած տղոց նկատմամբ, մեղմ խօսքով, ոչ պատշաճ վերաբերմունքին, բնական է մեր նորահաս այդ

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿՐԱԿՈՅՆ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂ ՄԸ ԶՈՂՈՒՄ Է

Շայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտնած է սահմանին ատրպեյճանական կողմի կրակոցէն զինուորական ծառայողի մը զոհուելուն բօթը:

«Արմէնփրէս»-ի փոխանցումով Պաշտպանութեան Նախարարութիւնը այս մասին հաղորդագրութիւն տարածած է:

«21 Օգոստոսին՝ տեղւոյն ժամը 15:30-ի սահմաններուն, Ատրպեյճանի զինեալ ուժերու ստորաբաժանումները կրակ բացած են Ախարաձորի բաժինին մէջ տեղակայուած հայկական դիրքին ուղղութեամբ, որուն հետեւանքով իրազէնային մահացու վիրաւորում ստացած է զինուորական ծառայող Վանիկ Արամի Ղազարեան:

Պաշտպանութեան Նախարարութիւնը կը վշտակցի եւ զօրակցութիւն կը յայտնէ զինուորական ծառայողի ընտանիքի անդամներուն, հարազատներուն եւ ծառայակիցներուն», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

ԱԳՍԿԷՅ
Ծաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ՍԷՏԻՍ ՊՍԳՍԼԵՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍՍԼԵԻ ՄՍՐԿՈՍԵՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄՍՍԱԹ Բ. ՄՍՍՈՒՐԵՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

«ՄԻՆՉԵՒ ԱՅՍ ՊԱՅԸ 2020-ԹՈՒԱԿԱՆԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՉԷ ՄԱՐՍՈՒԱԾ ՍՓԻՒՔԻ ՄԷՋ». ԱՐԱՍ ԱՐՔՈՒՆ

ՅԱՏՈՒԿ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ



Մեր հարցումներուն կը պատասխանէ «Armenian Mirror Spectator» թերթի, ինչպէս նաեւ Թէքէան Մշակութային Միութեան, Ամերիկայի եւ Գանատայի վարիչ տնօրէն՝ Արամ Արքուն:

Պրն. Արքուն, Արցախի պաշարումը առկայ է ութ ամիսէ ի վեր: Ունինք դրժ-բախտութիւններ, սովամահութիւն եւ ընդհանուր յուսահատական պատկեր, բայց պիտի պայքարինք վստահօրէն:

Միւս կողմէ Արցախեան խնդրին նուիրուած ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի առաջին նիստը արդէն մեր ետին է: Առհասարակ Արեւելեան Ամերիկայի պրիսմակէն դիտուած ինչ են ակնկալիքները:

Տրամադրութիւնները կարծէք անվտանգութեան ուղղուածութիւն ունին, քանի որ մինչեւ հիմա, միջազգային հարթակներու վրայ, Ատրպէյճանը յանդիմանելու, շրջափակումը վերացնելու լաւ խօսքեր եւ խոստումներ միայն կը լսենք, բայց գործնական որեւէ քայլ դեռ չենք տեսած: ՄԱԿ-ին դիմելը լաւ նշան մըն է, որ գոնէ Արցախի հարցը լսուեցաւ այդ բարձր հարթակէն: Բայց պէտք է յիշենք, որ այս Անվտանգութեան Խորհուրդին մէջ տասնհինգ անդամ կայ: Հինգ մնայուն անդամներն են Արուսաստանն է, եւ կրնայ ըլլալ, որ զանազան պատճառներով, գործնական քայլ առնելը արգիլէ: Վստահ, որ դիւանագիտական առումով Հայաստանը նախապէս պատրաստութիւն տեսած է, որպէսզի յաջողութեան սկիզբի մը հիմքը դրուի: Կենթադրենք, որ առնուազն յայտարարութիւն մը պիտի տրուի, բայց չենք գիտեր եթէ այդ պիտի ունենայ որեւէ ստիպողական գործադրական բաժին:



Դուք Միացեալ Նահանգներէն՝ Պոսթընէն կը խօսիք, եւ այսօր տխուր իրականութիւն մը կայ, քանի որ Արուսաստանը՝ աւելի քան իր 70-80 տարուայ դաշնակիցը Հայաստանը անտէր թողած է: Աշխարհը նաեւ կը դիտարկէ այդ մէկը: Մինչ այդ ԱՄՆ կ'ուզէ առիթը չփախցնել եւ նեցուկ կանգնիլ Հայաստանին: Իրական պատկերը ինչ է: Ինչ են շահերու յարաբերակցութիւնները: Ձեր կարծիքով, Արուսաստանի կողմէ ինչո՞ւ այս փորձերը կը կատարուին, եւ դուք ալ ըսիք, որ Արուսաստանը յանկարծ կրնայ «վէթօ» դնել եւ այս թեման փակել: Ինչպէս կը դիտարկէք այս բոլորը:

Ինչպէս նախապէս ըսի, ԱՄՆ-ի կոչերը թուղթի վրայ մնացին, այսինքն գործնական քայլեր չառնուեցան: Այդ դրական է, որ բանակցութեան փորձեր եղան, սակայն գործնական որեւէ բան տեղի չունեցաւ: Դժբախտաբար, չեմ կարծեր, որ մեր ԱՄՆ-ի կառավարութիւնն ալ կրնայ կամ ի վիճակի է աւելի մեծ ձեռք միջամտելու հարցին: Խնդիրը այն է, որ Ամերիկան կ'ուզէ Արուսաստանը դուրս մղել շրջանէն, եւ դէպի Ուքրանիա ուղարկած իր օգնութիւնը նաեւ այդ նպատակով է: Բայց միւս կողմէ, մենք կը հասկնանք, որ Ամերիկայի ամենամօտիկ դաշնակիցները Թուրքիան եւ Ատրպէյճանն են: Հայաստանը նոյնիսկ եթէ ամբողջապէս արեւմուտքի կողմը անցնի, ցանկին վրայ ամենէն վերջին տեղը պիտի գրաւէ, քանի որ Թուրքիան շատ աւելի ազդեցութիւն պիտի ունենայ, նոյնպէս Ատրպէյճանը իր քարիւղի եւ կազի ներուժով: Պէտք է իրատես ըլլանք: Նոյնն ալ կրնանք

ընել Արուսաստանի պարագային: Հայաստանը կամ Արցախը, իբր դաշնակից կամ իբր կարեւոր երկիր, շատ բարձր տեղ չեն գրաւեր անոր համար: Ուրեմն իրատեսական չէ սպասելը, որ Ամերիկայի կամ ՆԱԹՕ-ի օգնութեամբ լրիւ պիտի կարենանք ձեռքազատիլ այս կացութենէն: Որոշ չափով՝ այդ կրնանք օգտուիլ Ամերիկայէն, բայց սահմաններ կան: Նոյնպէս Արուսաստանը, իր ամանդական դերը չկրցաւ շարունակել, աւելի մեծ քաղաքական շահերու պատճառով: Ուքրանիոյ պատերազմը զինք տկարացուց եւ ան ստիպուեցաւ տնտեսական առումով յենիլ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ վրայ, հետեւաբար չի կրնար այդ շահերը զոհել Հայաստանի համար: Մենք բարեկամ չունինք, այլ քաղաքական շահեր կան եւ Հայաստանի տալիքը այնքան մեծ չէ, թէ Արուսաստանին եւ թէ Ամերիկային: Այդ պատճառով ալ այսօր շատ դժուարին վիճակի մէջ ենք:



Եթէ սեպտեմբ, որ մենք չկրցանք որեւէ բան քաղել այս եղածէն, մեր յաջորդ քայլը ինչ պիտի ըլլայ: Ատրպէյճանը, զենքի ուժով չկարենալով իր նպատակին հասնիլ, կ'ուզէ արցախահայութեան վրայ օդակը սեղմելով խեղդամահ ընել, սովամահ ընել եւ ի վերջոյ Արցախը հայաթափել:

Այդ, շատ դժուար վիճակ է, մեր ձեռքը շատ քարտեր չմնացին: Միակ բանը, որ կրնանք ընել, կրնանք փորձել միջազգային ըլլայ ռուսական, ըլլայ եւրոպական, ըլլայ ամերիկեան միջամտութիւնը ապահովել, գոնէ շրջափակումը կտրել: Պատերազմը կորսնցնելէն յետոյ ալ ետ նայելու պէտք չկայ: Դժուար վիճակի մէջ ենք: Յոյսը այն է, որ դիւանագիտական միջոցներով ճնշումներ բանեցնենք, որպէսզի փրկենք արցախահայութիւնը, ինչ ձեռք ալ ըլլայ ըլլայ օդային ճանապարհով, ըլլայ ցամաքային: Հիմա դանակը ոսկորին հասած է, եւ արագ պէտք է շարժիք, քանի որ վիճակը օրէ օր աւելի վատ կը դառնայ:

Սփիւռքի մէջ որոշակի նոր շարժում սկսաւ, այն իմաստով, որ նոյնիսկ բարձր մակարդակի Արցախցի պատասխանատուներ մեղադրեցին Սփիւռքը, որ լուռ է: Մենք կը տեսնենք, որ Լոս Անճըլըսի մէջ ցոյցեր տեղի կ'ունենան, նաեւ Նիւ Եորքի ՄԱԿ-ի կեդրոնին առջեւ մեծ ցոյցեր եղան: Այս քայլերը յուսադրիչ են, թէ սովորական ալիք է, որ կու գայ ու կ'երթայ: Ինչ դասեր քաղել այս բոլորէն:

Պէտք է հասկնանք, որ Սփիւռքին մեծ մասը շուարած է, չի գիտեր ինչ պիտի ընէ, քանի որ 2020 թուականի պարտութեան հարուածը եթէ որոշ չափով մարսուեցաւ Հայաստանի մէջ, Սփիւռքի մէջ շատ դժուար եղաւ դէմ առ դէմ գալը, ընդունիլը: Ինչպէս Հայաստանի մէջ, մեր մէջն ալ պառակտումը մեծ է: Ժողովուրդին մէկ մասը Հայաստանի ղեկավարութիւնը «դաւաճան» կ'որակէ, եւ կ'ըսէ, թէ ան «դաւաճանած» է հայ ժողովուրդի շահերը, միւս մասը՝ հակառակը, կը հաստատայ, որ Հայաստանի ղեկավարութիւնը ճիշդ կ'ընէ, թէ ճնշման տակ ուրիշ բան չի կրնար ընել: Երբ պատերազմը կորսնցուցինք եւ Արցախի մեծ մասը Ատրպէյճանին ձեռքը ինկաւ, նուիրատուները, որոնք օգնած էին, որ Արցախի հողին վրայ հաստատութիւններ հիմնուին կամ ծրագիրներ մշակուին, անոնք քիչ մը շշմեցան: Շատեր սկսան մտածել աւելի Հայաստանի վրայ կեդրոնանալու մասին: Յետոյ, տեսնելով, որ Հայաստանի հողերն ալ կամաց-կամաց կը գրաւուին, այդպէս շատ մտահոգեց զիրենք: Թէ ինչ պէտք է ընենք, շատ դժուար է պատասխանելը:

Մեր քաղաքական ուժերը նոյնպէս պառակտուած վիճակի մէջ են: Ուրեմն կը կարծեմ, որ ատիկա մղիչ ազդակ մըն է, եւ այդ պատճառով է, որ ցոյցեր կը տեսնենք, քանի որ մարդիկ կ'ուզեն բան մը ընել, օգտակար դառնալ: Ցոյց եթէ պիտի ընենք, պէտք է գիտնանք, թէ ուր պէտք է ընենք: ՄԱԿ-ին առջեւ ընելը շատ լաւ է: Քալիֆօրնիոյ մէջ ընելը լաւ է, քանի որ մեծ թիւ կարելի է հաւաքել եւ ձայնը լսելի դարձնել: Իսկ հայութեան փոքր թիւ ունեցող շրջաններուն մէջ թիրախները պէտք է որոշուին: Պետութիւնները պէտք է կերպով մը շարժենք: Դժուար բան է, սակայն յոյս ունիմ, որ կացութիւնը մօտ ատենէն կը փոխուի:


Շարագորոյցը՝ Սագօ Արեանի

ԳԱՅԻՐԷՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿԵՑ՝ ՊԵՐՏ ԳՈԳՈՐԵԱՆ

«Նոգեկան մխիթարութեամբ կը յիշենք այն պահերը, երբ մեր այցելութեանց առթիւ Գահիրէ, ձեզի հետ միատեղ աղօթեցինք Ձեր փառաւոր աղօթքի Տունին մէջ որ հայ սփիւռքի ամբողջ տարածքին ամենէն գեղեցիկ տաճարն է, յորինուած հայկական դասական ճարտարապետական հարազատ ոճով»: *
Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց (ի Նոյեմբերի 1978 ամի)

«Պատմութիւն Շինութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Նորաշէն Եկեղեցոյ Գահիրէի» գիրքին հեղինակն է Թ. Ե. Գ. (Թորգոմ Եպս. Գուշակեան հետագային արքեպիսկոպոս): **
Գիրքը հրատարակուած է 1927-ին. այսինքն նախքան օծումն ու նաակատիքը:
Բացառիկ բծախնդրութեամբ եւ անհաւատալի մանրամասնութեամբ երջանկայիշատակ սրբազան հայրը՝ պատմականը կ'ընէ այդ շինութեան:
Եկեղեցին շինուած է հայկական ճարտարապետութեան ուսումնասիրուած ծրագրի մը համաձայն:
Պրն. Լեւոն Նաֆիլեանի կը վիճակուեր եկեղեցիին ճարտարապետութիւնը:



-« Յատակագծին մասին ներշնչուած է Անիի Մայր Եկեղեցին, արտաքին կառուցուածքին մասին՝ Աղթամարի Ս. Խաչ Տաճարէն, զանգակատան մասին՝ Արագածոտնի Յովհաննավանքի Եկեղեցին. իսկ գմբէթը ընդհանուր առմամբ կը յիշեցնէ Էջմիածնի Կաթողիկէն, երկու պահարաններու երկու արտաքին դուռները՝ ձեւը ունին Էջմիածնի Մայր Տաճարի հարաւային դրան. պատուհանները, չորս կողմը բոլորած քանդակազարդ գօտին, երեք ճակատներուն անկիւնաձեւերուն մէջի եռանկիւնաձեւ գարդերը, ինչպէս նաեւ գմբէթի թմբուկին քիւրուս ամբողջ զարդարանքը՝ մեծ մասամբ Աղթամարի տաճարէն, եւ հայկական մանրանկարչութենէ: Հիւսիսային եւ հարաւային երկու դուռներուն երկկողմի ուղղաձիգ որմախորշերը, բացի իրենց զարդարանքէն, կը յիշեցնեն Էջմիածնի Ս. Չոփիսիմէի Տաճարները»: «Նոյնը պարտինք ըսել առաւելապէս նաեւ արեւմտեան աագ դրան ետեւի խճանկար մեծ պատկերներին համար, որ «Հայաստանեայց Հայր Հաւատոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ»ն է , Դ. դարու եկեղեցական տարազ պարզութեան մէջ»:

Նշելիս սրբազան Հայրը նախապատուութիւնը կու տայ հիմնադիր բարերարին՝ Գրիգոր Եղիայեանի կենսագրութեամբ սկսելուն: Յետոյ կ'անցնի նիւթական անշարժ կամ շարժուն գոյքերու արժէքներուն: Գրիգոր Եղիայեան անշուշտ չի հասնիր տեսնելու իր ազգային տիտանեան առատաձեռնութեան արդիւնքը. կը մահանայ 73 տարեկանին (1833, Մայիս 25 - 1911, Յունիս 21):

Թորգոմ սրբազան կ'արձանագրէ բարերարի կտակին մանրամասնութիւնները, յետոյ շինութեան նախապատրաստութիւնները:


Շէնքին ընդհանուր հսկողութիւնը յանձն առած է Տէ Ֆարոս տան ճարտարապետ պ. Ն. Գալճի. խորանը՝ ճարտ. պ. Լեւոն Ազնաւոր:

Քաղաքական ժողովը 1924 Ապրիլ 30-ի նիստի

մէջ կ'ընտրէ Շինութեան Յանձնաժողովը, Առաջնորդի նախագահութեան տակ: Զայն կը կազմէին հետեւեալ ազգայինները.

Տեարք՝ Հայկ Ինայթեան (Ատենապետ), Տօթա Նազարեթ Քէչեճեան (Ատենադպիր), Գեորգ Ակորովիչ (կը մահանայ), Գրիգոր Սէֆերեան, Լեւոն Ասատուր, Միհրան Ղազարոսեան, Մկրտիչ Մանսուրեան եւ Տօթա Սարգիս Ժամկոչեան:

Գ. Ակորովիչի կսկծալի մահէն վերջ, այս ժողովին վրայ կ'աւելցուին, իբր մասնագետ խորհրդա-



կաններ՝ Տեարք՝ Արտաշէս Նետուրեան, Պօղոս Սելեան եւ Միքայէլ Միքայէլեան:

ՀԻՄՆԱՐԿԷՔ ԵՒ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1924 Օգոստոս 31-ի, Կիրակիին կատարուեցաւ հիմնարկէքի արարողութիւնը, ըստ ծեսի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ:

Առաւօտուն Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ, Ս. Պատարագի միջոցին կատարուեցաւ տասնըվեց վեմբարերու օծումը, որոնք երեկոյին, խումն բազմութեան ներկայութեամբ, զետեղուեցան մեծավայելուչ հանդիսաւորութեամբ:

Օծեալ վեմերու կնքահայրութիւն ստանձնած էին Տեարք՝

Տօթա Աբգար Տէր-Մարգարեան, Արամ Համամճեան, Բարսեղ Պալըքճեան, Բիւզանդ Կեօզիպէօյիքեան, Գեորգ Պերպերեան, Գրիգոր Խալապեան, Զարմայր Քէչիշեան, Զօս Գուշակեան, Լեւոն Քիրաղեան, Կիրակոս Կիրակոսեան, Հայկազուն Տ. Յովհաննէսեան, Յարութիւն Սքէնճեան, Յովհաննէս Զաղացպանեան, Յովհաննէս Քարբերդեան, Ներսէս Գալըպճեան եւ Ստեփան Տնծալեան:

Ս. Լուսաւորիչ վեմբարին հետ թաղուեցաւ մետաղեայ եւ ապակեայ կրկնակ պահարանի մը մէջ դրուած մագաղաթեայ յիշատակարան մը, որուն պատճենն է հետեւեալը:




«Յամի Տեանն 1924, եւ ի տոմարական թուականիս մերում Ռ Յ Ն Դ, ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տեանն Գեորգայ Ե. Սրբազնագոյն կաթողիկոսի, աստ ի Գահիրէ, որ է մայրաքաղաք Եգիպտոսի, ի թաղին որ կոչի Շարա Ապպաս, այսօր, ի վերջնում ատուր ամըսեանն Օգոստոսի, ի Կիրակէի, կատարեցաւ հանդէս հիմնարկութեան Եկեղեցոյն Հայոց, նուիրելոյ յանուն

Սրբոյ Նորն Մերոյ Գրիգորի Լուսաւորչին, զոր այրն մեծահաստ Գրիգոր Եղիայեան, ի Հայոց Եգիպտոսի, հանգուցեալն յամի Տեանն 1911, առանձինն կտակաւ սահմանեալ էր կառուցանել արդեամբք գոյից իւրոց, ի ձեռն Ազգային Վարչութեան Հայոց Գահիրէի, եւ ընդ կտակակատար տեսչութեամբ Պօղոս Փաշայի Նուպար, ի սեփականութիւն Ազգիս Հայոց, եւ ի հոգեւոր վայելումն Հայոց բնակելոց ի Մայրաքաղաքիս:

Եւ քանզի յոյժ տօթագին էին օրք յայսմ եղանակի, եւ չէր մարդ խումներամ ժողովուրդեանն կալ մնալ ընդ-

երկար յարեզեր եւ ի բացօթեայ վայրի տեղոյն՝ ուր կառուցանելոցն էր տաճարս սուրբ, վասն որոյ օծումն վեշտասան վիմաց հիմանցն եղէ, յառաւօտուն, ի Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ քաղաքիս, ի ձեռն Տ. Թորգոմայ Ս. Եպիսկոպոսի, Առաջնորդի Հայոց Եգիպտոսի, եւ հինգ ժամու երեկոյին կատարեցաւ զետեղումն օծեալ վիմացն այսոցիկ ի խորշս հիմանցն, ուր եւ թաղեցաւ այս գիր յիշատակի, առ երի վիմին օծելոյ յանուն Սրբոյ Լուսաւորչին:



Տացէ. մեզ ամենեցուն Տէր տեսանել բարեաւ եւ զկատարումն շինուածոյ Սրբոյ Եկեղեցոյս, երկրպագել ի նմին, առաջի սեղանոյ փառաց իւրոց, եւ ի բարեխօսութիւն ունելով զՀայրն Հաւատոյս եւ զԼուսաւորիչն հոգոց մերոց զՍուրբն Գրիգոր, հայցել զգթութիւն կամաց Աստուծոյ Ամենակալին, ի խաղաղութիւն ամենայն աշխարհի, եւ ի մխիթարութիւն տառապելոց Ազգիս Հայոց»:

ՇԻՆՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Շինութեան գործը, տեսց շուրջ երեք տարին (1924 Օգոստոս- 1927 Մայիս):

Սրբազան Հայրը մանրամասնօրէն կ'անդրադառնայ խորանին, գաւիթի, գետնայարկի (անսիւն տաճարի կառուցուածքին՝ (Be'ton arme' - մեթոսին), ու վերնատունին մասին:

Ամենէն հետաքրքրական սակայն զանգակատունըն է:

ԶԱՆԳԱԿՆԵՐԸ

Զանգակատան մէջ զետեղուած են ինը զանգակներ, զորս նուիրեց Տիար Յակոբ Յակոբեան: Այս իննէն երեքը, զորս կարելի է հնչեցնել թէ՛ մի առ մի եւ թէ՛ միասին, անուանուած են ՀԱՒԱՏԷ, ՅՈՅՍ

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 28 AOÛT 2023

Ce que veut la Russie au Haut-Karabagh

Texte écrit en anglais par Benjamin Poghosian et publié dans *The Armenian Mirror Spectator* en date du 13 août 2023



Lorsque l'Arménie, l'Azerbaïdjan et la Russie ont signé la déclaration trilatérale du 10 novembre 2020, il semblait que le Kremlin avait remporté une nouvelle victoire dans le Caucase du Sud. C'était un secret à peine voilé que la Russie voulait avoir des bottes sur le terrain du Haut-Karabagh et, au moins depuis 2014-2015, faisait pression pour une solution qui envisageait le déploiement de casques bleus russes dans la région après le retrait des forces arméniennes de la zone de sécurité autour du Haut-Karabagh.

L'idée de déployer des soldats de la paix dans la région dans le cadre du règlement du conflit n'est pas nouvelle. L'Organisation pour la sécurité et la coopération en Europe (OSCE) a même créé un groupe de planification de haut niveau pour concevoir l'opération. Cependant, alors que la communauté internationale parlait de forces multinationales de maintien de la paix et que beaucoup soutenaient que les pays coprésidents, dont la Russie, ne devraient pas participer à l'opération, la Russie était intéressée à n'avoir que des troupes russes dans le Haut-Karabagh, la considérant comme un outil tangible afin d'assurer son influence en Azerbaïdjan. Ainsi, alors que les casques bleus russes entraient dans le Haut-Karabagh quelques heures seulement après la signature de la déclaration du 10 novembre 2020, il y avait en Arménie le sentiment que la sécurité des Arméniens était désormais garantie. Les experts ne cessaient de répéter comme un mantra que les troupes russes ne quittaient jamais le territoire où elles entraient. Ainsi, presque tout le monde était convaincu que les troupes russes resteraient au Haut-Karabagh pour toujours et que le statut de la région demeurerait dans l'impasse, assurant aux Arméniens une indépendance de facto face à l'Azerbaïdjan.

Il est difficile d'évaluer la précision de ces estimations faites en novembre 2020 et si la Russie était intéressée à maintenir ses troupes au Haut-Karabagh pour toujours, ce qui en fait un point de discorde sans fin avec l'Azerbaïdjan. Pendant ce temps, alors que la guerre en Ukraine augmentait considérablement l'importance de l'Azerbaïdjan pour la Russie en tant que voie de transit la plus courte pour atteindre l'Iran et établir un couloir qui relierait la Russie à l'Inde et à d'autres pays asiatiques via la route Russie-Azerbaïdjan-Iran, l'idée que la Russie serait prête à aggraver considérablement ses relations avec l'Azerbaïdjan pour une présence militaire au Haut-Karabagh paraît bien moins réaliste.

Une présence militaire en Azerbaïdjan est-elle le seul moyen pour la Russie de protéger ses intérêts ? Il n'y a pas eu de présence militaire russe en Azerbaïdjan de 2012 à 2020, mais cela n'a pas empêché les deux pays de développer des partenariats stratégiques, notamment des ventes d'armes à grande échelle.

Simultanément, après le début de la guerre en Ukraine, le collectif occidental, et surtout les États-Unis, ont lancé une nouvelle « politique d'endiguement de la Russie » dont le but principal est de réduire la présence et l'influence de la Russie dans l'espace post-soviétique, y compris le Caucase du Sud. Dans ce contexte, la présence militaire russe au Haut-Karabagh ne pouvait rien lui garantir. Si l'Azerbaïdjan devient trop antirusse, et si après les processus de normalisation Arménie-Azerbaïdjan et Arménie-Turquie, la présence militaire russe en Arménie peut disparaître, alors les casques bleus russes au Haut-Karabagh deviennent un handicap plutôt qu'un atout pour la Russie.

Dans l'intervalle, alors que le gouvernement arménien reconnaissait l'intégrité territoriale de l'Azerbaïdjan à l'intérieur des frontières administratives de l'Azerbaïdjan soviétique de 1991, y compris le Haut-Karabagh, l'idée même de maintenir son statut dans les limbes pour garantir la prolongation indéfinie du mandat des casques bleus russes, est devenue obsolète. Si l'Arménie et l'Azerbaïdjan s'accordent sur son avenir, aucune puissance extérieure ne pourra rejeter cet accord et faire pression pour une solution différente.

Suite a la page 6

Alerte active au génocide par l'Azerbaïdjan en Artsakh

L'Institut Lemkin pour la prévention du génocide est bouleversé par la nouvelle du décès de K. Hovhannissian, 40 ans, mort de faim le 15 août 2023, conséquence directe du blocus azerbaïdjanais de l'Artsakh, comme en témoignent les rapports du coroner et le médecin légiste de la République d'Artsakh. Le blocus de l'Artsakh, en cours depuis le 12 décembre 2022, est la cause d'une augmentation de la malnutrition, des fausses couches et des complications médicales liées à l'impossibilité pour les personnes d'accéder à une nourriture et à des soins médicaux appropriés. Le blocus a commencé à causer la mort directe de citoyens arméniens d'Artsakh par la famine.

Ce blocus est génocidaire dans son intention d'éliminer la population arménienne d'Artsakh, soit par des déplacements massifs, soit par une famine massive. Le président azerbaïdjanais Ilham Aliev l'a lui-même déclaré à plusieurs reprises, notamment le 29 mai 2023, lorsqu'il a menacé : « Il n'y aura pas de troisième invitation. Soit ils viendront à nous par eux-mêmes, soit les événements se développeront dans une direction différente. Nous avons toutes les chances d'effectuer n'importe quelle opération dans cette région. Par conséquent, le « parlement » doit être dissous, la personne qui se dit « président » doit se rendre, tous les « ministres », « députés » et autres doivent déjà quitter leur poste. Ce n'est que dans ce cas que nous pourrions parler d'une quelconque forme d'amnistie. »

L'Institut Lemkin tient à préciser que des dirigeants comme le président turc Recep Tayyip Erdogan, le président russe Vladimir Poutine, la présidente de la Commission européenne Ursula von der Leyen, le président du Conseil européen Charles Michel, le président français Emmanuel Macron, le chancelier allemand Olaf Scholz, le président américain Joe Biden, le secrétaire d'État américain Anthony Blinken, et tous les autres dirigeants qui ont créé l'impunité avec laquelle le président Aliev opère désormais, sont directement responsables de la mort de cet homme, ainsi que de tous les autres qui pourraient mourir à la suite de ce blocus. Ils peuvent également être complices de crime de génocide.

L'Institut Lemkin pour la prévention du génocide tient à préciser une fois de plus que tout individu et/ou État permettant à l'Azerbaïdjan de bloquer l'Artsakh, que ce soit directement par le biais de l'aide étrangère ou indirectement en refusant d'utiliser tous les outils diplomatiques à sa disposition, est complice de ce blocus et du génocide des 120 000 citoyens de la République d'Artsakh, et pourrait être tenu responsable de complicité devant un tribunal. Il est urgent que les dirigeants internationaux prennent des mesures immédiates contre l'Azerbaïdjan pour éviter de nouveaux décès dans la République d'Artsakh.



Grand potentiel de coopération militaire entre l'Arménie et la Chine


L'Arménie et la Chine ont un grand potentiel de coopération dans le secteur militaire, a déclaré l'attaché militaire de l'ambassade de Chine, le colonel supérieur An Qiang, lors d'un point de presse, le 17 août dernier.

« En tant qu'attaché militaire, ma priorité est de développer la coopération entre les deux pays dans le domaine militaire. L'Arménie et la Chine ont des similitudes culturelles. L'Arménie et la Chine ont traversé de nombreuses difficultés au cours de l'histoire. Et les deux pays ont su surmonter ces difficultés. Tout cela est la base pour nous permettre de développer la coopération dans divers domaines, y compris le secteur militaire. Bien sûr, il y a beaucoup de travail à faire. Nous pouvons également coopérer au maintien de la paix internationale, au déminage humanitaire, à l'éducation militaire, aux réformes militaires et aux technologies. Ces domaines de coopération ont un grand potentiel de développement. Je ferai tout pour que les relations arméno-chinoises dans le domaine militaire se développent », a déclaré l'attaché militaire de Chine.

Parlant de la visite d'une délégation conduite par le directeur du Centre international de recherche du ministère chinois de la Défense, An Qiang a ajouté qu'il avait personnellement organisé la visite afin de renforcer la coopération.

« La délégation qui s'est rendue en Arménie a été très satisfaite des résultats des réunions. Je suis sûr que la coopération dans le domaine militaire entre les deux pays sera très fructueuse. Je ferai tout pour cela », a-t-il conclu.

L'ambassadeur de Chine en Arménie, Fan Yong, a déclaré que la Chine était attentive aux derniers développements autour du corridor de Latchine et s'est dite préoccupée par la situation actuelle et ses conséquences.



Suite a la page 6

Adoption possible d'une résolution obligeant l'Azerbaïdjan à lever le blocus de l'Artsakh



Le ministère des Affaires étrangères de l'Artsakh a salué la réunion du Conseil de sécurité des Nations unies tenue le 16 août 2023, pour discuter de la catastrophe humanitaire en République d'Artsakh à la suite du blocus illégal du corridor de Latchine par l'Azerbaïdjan.

« Nous exprimons notre gratitude envers les pays qui sont restés fidèles aux principes du droit international et de l'humanisme, et avons souligné dans leurs déclarations le besoin urgent de débloquent le corridor de Latchine et d'assurer la livraison de fournitures vitales à la population dans le besoin en Artsakh », a indiqué le ministère dans un communiqué.

Elle exprime, simultanément, sa déception face au fait que certaines délégations tentent de trouver un équilibre illusoire et hautement risqué entre les aspirations du peuple d'Artsakh à vivre dans sa patrie en toute liberté, sécurité et dignité, et l'ambition de l'Azerbaïdjan de le soumettre par la force et l'anéantir.

« Il ne peut y avoir de compromis entre les valeurs universelles de liberté, de dignité humaine, de paix et de justice, d'une part, et les manifestations extrêmes de violations systématiques et à grande échelle des droits humains, menées dans l'intention de détruire physiquement un peuple, d'autre part », lit-on dans le communiqué.

« Nous espérons que les États membres du Conseil de sécurité des Nations unies feront preuve de cohérence et d'une position de principe dans la prévention de nouvelles actions criminelles contre le peuple d'Artsakh, et consolideront leur position en adoptant une résolution obligeant l'Azerbaïdjan à lever le blocus illégal du corridor de Latchine sans conditions préalables ni liens avec des itinéraires alternatifs, dans le strict respect de la déclaration trilatérale du 9 novembre 2020 et des décisions de la Cour internationale de justice. Compte tenu de l'intention génocidaire évidente de l'Azerbaïdjan, toute tentative d'entraver les efforts du Conseil de sécurité de l'ONU pour mettre fin au siège inhumain et à la catastrophe humanitaire en Artsakh équivaudra à une approbation silencieuse, voire à une complicité dans les crimes commis par Bakou », a déclaré le ministère des Affaires étrangères.

Ce que...

Suite de la page 5

L'augmentation croissante de l'implication des États-Unis et de l'UE dans le processus de négociation a sonné l'alarme en Russie sur la possibilité qu'un accord de paix entre l'Arménie et l'Azerbaïdjan soit signé quelque part en Europe. Ce sera une perte de réputation et de vie réelle pour la Russie, car cela établirait que la Russie n'est plus l'acteur le plus influent de la région. Alors qu'elle tente de conserver son statut de puissance régionale dans le Caucase du Sud, elle a besoin de relations plus ou moins positives avec tous les États de la région. Ainsi, si l'Arménie accepte que le Haut-Karabagh fasse partie de l'Azerbaïdjan, abandonne toute demande, même celui d'un statut autonome pour la région et n'exige que les droits et la sécurité des Arméniens qui y vivent, il n'y a aucune logique pour la Russie de parler du statut du Haut-Karabagh, ajoutant ainsi des tensions dans ses relations avec l'Azerbaïdjan et la Turquie.

